ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Սույնով տալիս եմ իմ անվերապահ համաձայնությունը՝ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքում՝ «Հաճախորդի իրավունքներ» բաժնում հրապարակված «Անձնական տվյալների մշակման, տեղեկատվության հավաքագրման, օգտագործման և փոխանցման, ինչպես նաև իրավասու այլ պետական և ոչ պետական մարմիններից, կազմակերպություններից հարցումներ կատարելու վերաբերյալ» հրապարակային համաձայնության (այսուհետ նաև՝ Համաձայնություն) տեքստին՝ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ) ԱՆԳՐԱՎ ԵՎ/ԿԱՄ ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՎԱՐԿԵՐ[1] ՍՏԱՆԱԼՈՒ համար անհրաժեշտ տվյալների մշակման մասով:

Գիտակցում եմ, որ տալով սույն համաձայնությունը, մինչև իմ՝ Բանկի հետ գործարար իրավահարաբերության մեջ մտնելը և այդ իրավահարաբերության ընթացքում վերոնշյալ ծառայությունից օգտվելու համար նույնականացնելու, որոշումներ ընդունելու, կարծիք ձևավորելու, իրավունքներ ձեռք բերելու կամ իրավունքներ կամ արտոնություններ տրամադրելու կամ իրավունքները սահմանափակելու կամ զրկելու նպատակներով (ընդ որում՝ անձի վերաբերյալ տեղեկությունները Բանկը կարող է հավաքագրել իրավաչափ ցանկացած եղանակով, ինչպես անմիջապես իրենից, այնպես էլ՝ օրենքով չարգելված ցանկացած այլ աղբյուրներից) **մշակել, այդ թվում՝ հավաքագրել, ամրագրել, մուտքագրել, համակարգել, կազմակերպել, պահպանել, վերափոխել, վերականգնել, փոխանցել (Բանկի հետ համագործակցության կամ քաղաքացիական այլ պայմանագրերի հիման վրա ծառայություններ մատուցող անձանց կամ կազմակերպություններին (այդ թվում՝ օտարերկրյա), ՀՀ և օտարերկրյա ֆինանսական կազմակերպություններին, որոնք Բանկի հետ կնքել են գաղտնիության պահպանման համաձայնություններ կամ նման պարտավորություն ունեն օրենքի ուժով), ուղղել, ուղեփակել, ոչնչացնել, օգտագործել**, ինչպես նաև՝ մեկից ավելի անգամ **դիմել, կատարել հարցումներ** ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, այդ թվում՝ **ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը, ՀՀ ոստիկանությանը, Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությանը, ՀՀ հարկադիր կատարման ծառայությանը, ՀՀ կադաստրի կոմիտեին, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը, ՀՀ Կենտրոնական բանկին, ինչպես նաև՝ տվյալներ մշակող ցանկացած մարմնի/անձի, այդ թվում՝ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված մարմնին/անձին,** իմ վերաբերյալ **ստանալ, ինչպես նաև տրամադրել** վերոնշյալ ծառայության/ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ (այդ թվում՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված և պաշտպանվող)՝ Համաձայնության մեջ նշված տվյալները:

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունն առ այն, որ մինչև վարկային կամ պարտավորական այլ պայմանագի կնքելը, իսկ կնքման դեպքում դրա գործողության ողջ ընթացքում ցանկացած պահին առանց ինձ նախապես տեղյակ պահելու մեկից ավելի անգամ Բանկը **կատարի հարցումներ** «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» փակ բաժնետիրական ընկերության վարկային բյուրոյին, ստանա և տրամադրի իմ ներկա և անցյալ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, վարկային զեկույցներ առևտրա-վարկային, հարկային զեկույցները՝ հետևյալ աղյուսակում նշված նպատակներով՝

Նպատակ	Ժամկետ	Ազդեցությունը վարկային սքորի վրա	Պարտադիրությունը	Հաճախականությունը
☒Նոր վարկի տրամադրում/վարկի գումարի ավելացում/վարկի տրամադրման պայմանի փոփոխություն	Մինչև իրավահարաբերությունը մտնելը և իրավահարաբերության ամբողջ ընթացքում	Բացասական	պարտադիր	Սահմանված չէ
☒Գործող վարկի մոնիտորինգ	իրավահարաբերության ամբողջ ընթացքում	Չի ազդում կամ ցածր հավանականությամբ է ազդում	պարտադիր	Սահմանված չէ

Տեղեկացված եմ, որ վերոնշյալ հարցումները կարող են ազդել իմ վարկային սքորի վրա վերոնշյալ աղյուսակում նշված կերպով:

Տեղեկացված եմ, որ ցանկացած ժամանակ կարող եմ հրաժարվել տրված համաձայնությունից, բացառությամբ, եթե իմ և Բանկի միջև արդեն ծագել են պարտավորական իրավահարաբերություններ:

Հավաստում եմ, որ կարդացել եմ համաձայնության տեքստը և այն ինձ համար ամբողջությամբ հասկանալի, ընկալելի և ընդունելի է:

Սույն համաձայնությունը տրված է համարվում այն որևէ եղականով ստորագրելու կամ Բանկի առցանց համակարգում կամ բջջային հավելվածում (online banking կամ mobile banking) համապատասխան նշում կատարելու պահից:

[1] Ընդ որում, Վարկ տերմինը սույն համաձայնության մեջ ներառում է նաև վարկային գիծը, օվերդրաֆտը, երաշխիքը, ակրեդիտիվը, ինկասո հաշվարկները և վարկային ռիսկ պարունակող այլ պրոդուկտները